**Մարե, Մարե**

1. Մարե, Մարե,
   Գրնա, գրնա, հետդ եմ,
   Ջանե, ջանե,
   Ալ խնձոր եմ, ջերդ եմ:
   Մարե ջան, Մարե ջան,
   Ալ խնձոր եմ, հետդ եմ,
   Ջանե ջան, ջանե ջան,
   Չալ խնձոր եմ, ջերդ եմ:

2. Մարե, Մարե,
   Սիրել եմ սերն էրեսին,
   Ջանե, ջանե,
   Անթառամ թերն էրեսին:
   Մարե ջան, Մարե ջան,
   Սիրել եմ սերն էրեսին,
   Ջանե ջան, ջանե ջան,
   Անթառամ թերն էրեսին:

**Աբարանը քարոտ ա**

1. Աբարանը քարոտ ա
   Վայ, լե, լե, լե, վայ, լո ջան,
   Քարի տակը արոտ ա,
   Իմ մայրիկ ջան, իմ քույրիկ ջան:

2. Նշանածդ չինար է,
   Վայ, լե, լե, լե, վայ, լո ջան,
   Չինար ու բարդի ծառ է,
   Իմ մայրիկ ջան, իմ քույրիկ ջան:

**Հայ, վերվերի, վերվերի**

Արի էրթանք մարագը,
Հայ, վերվերի, վերվերի,
Ուտենք մեղր ու կարագը,
Ջան, վերվերի, վերվերի:

Արի էրթանք կալերը,
Հայ, վերվերի, վերվերի,
Կանչենք անուշ խաղերը,
Ջան, վերվերի, վերվերի:

**Վեր, հա վեր -վեր**

Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր ասես՝ էնիկ է,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Աչքեր ունես՝ նըռան հատ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կապտածաղիկ կըտավհատ,
Վերն, օր ասես էնիկ է,
Էրնեկ թե մերըդ բերեր,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Քեզ պես աղջիկ քանիմ հատ,
Վերն օր հավնիս՝ էնիկ է: